Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~Հ/182~~
ազգ. գրքերի
N/138

26 ՍԵՊ 2013

26.04.2013

24 AUG 2010

Изъ листковъ Общества русскихъ врачей въ
помять Н. И. Пирогова

II Изданіе Коммиссіи Имп: Кавк. Мед. Об-ва по распространенію гигіеническихъ свѣденій въ народѣ

616.9
Ի-61

1. ԻՆՉՊԷՍ ՊՀՊՏՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԹԱՂԻԿ ՀՐԱՆԴՈՒԹԻՒՆԷՑ

2. ՔՈՒԹԷՀ

3. ՍԻՊԻԼԻՍ

4. ԻՆՉՊԷՍ ԿԵՐԱԿՐԵԼ ԹԱԳՈՒՈՐ ՄԱՆԿԱՆ

II. Տպագրութիւն

Թարգմանութիւն և խմբագրութիւն Աշտարակեցի Յանձնաժողովի, որ առողջապահական ժողովրդական գրուածքներ հրատարակելու համար ամեն տարի ընտրւում է ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Կովկասեան Բժշկական Ընկերութիւնից։

ТИФЛИСЪ
Типографія Т. М. Ротиніанца, Гол. пр. 41.
1903

6913

Дозволено цензурою, Тифлисъ, 5-го Декабря 1902 г.

1. ԻՆՉՊԷՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼ ԾԱՂԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԻՑ

Փոխադր. բժշկապ. Ա. Բաքայեանի

Հին ժամանակներում ծաղիկը շատ տարածուած հիւանդութիւն էր, շատ էլ ժողովուրդ էր կոտորում ու այլանդակում։ Դեռ սրանից մի դար առաջ 15 հոգուց մէկը հազիւ թէ անվտանգ ազատուէր ծաղկից։ Որտեղ տասը հոգի ծաղկից բռնուէին, դրանցից մի երեքը մահի ճարակ կըլինէին, մնացածներից որը կուրանում էր, որը խլանում էր և հազիւ թէ մէկը չեշտ չըմնար։ Եւ մարդիկ չէին իմանում՝ ինչպէս պաշտպանուեն այդ սարսափելի ցաւից, մինչև որ մի անգլիացի բժիշկ — սրա անունն էր Ջէններ — անցեալ դարում վերջապէս հնար գտաւ այս ցաւի դէմ։

Պաղուց յայտնի է թէ՝ ծաղկացաւը միայն մարդկանց չէ բռնում, այլ երևում է և տաւարի վրայ — ձիաների, ոչխարների ու կովերի վրայ։ Ձիան ոտքերի՝ վրայ է դուրս տալի ծաղիկը, ոչխարի բոլոր մարմնի վրայ, իսկ կովերի միայն ծծերի կամ պտուկների վրայ։ Պաղուց էլ նկատուած էր, որ երբ գեղջկուհին կթում էր ծաղկով բռնուած կովը, կթողի մատների վրայ դուրս էին գալի իսկ այն տեսակ ծաղկի բշտիկներ, որպէս էին և կովի ծծերի վրայ։ Բայց այդ դէպքում կին—

արմատը երբէք ծանր հիւանդութիւն չէր բաշում, այլ թեթև ու անվտանգ։

Դոկտոր Ջէննեերը անգլիական մի գիւղի բժիշկ էր։ Ապրելով գիւղացւոց հետ, նա ականատես էր ժողովրդի տանջանքներին ծաղկի երեսից. ուստի մտածում էր միշտ՝ մի կերպով այդ սարսափելի չարիքի առաջն առնել. սրա համար ամեն տեսակ տեղեկութիւններ հաւաքում էր. նոյն իսկ գիւղացիներին հարց ու փորձ անելով։ Այս տեղեկութիւններից նա իմացաւ հետևեալը։ Երբ կով կթող կնկայ մատներին դուրս տայ հիւանդ կովից փոխուած ծաղիկը, այլ ևս այդ կինարմատին չի դիպչիլ մարդկային վտանգաւոր ծաղիկը, թէկուզ նրա բոլոր գերդաստանը վարակուած լինի խիստ և ծանր ծաղկով։ Այս բանը Ջէննեերը վճռեց փորձով հաստատել 1796 թուի մայիսի 14-ին։ Մի գիւղացու ութը տարեկան տղայի (Ֆիբս անունով) թևերի կաշու վրայ Ջէննեերը նշտարով երկու բարակ և փոքրիկ ճեղք արեց և նրանց վրայ քսեց մի-մի կաթիլ այն թարախից, որ առած էր կովածաղկով վարակուած մի կովատան կինարմատի բշտիկներից։ Ամեն բան այնպէս եղաւ, ինչպէս որ սպասում էր Ջէննեերը. տղայի թևերին մի քանի օրից յետոյ դուրս տուին կովի ծաղկի նման բշտիկներ. այս միջոցին նա ունեցաւ թեթև տաքութիւն. մի քանի օր էլ անցած՝ բշտիկները քիչ-քիչ չորացան, տղան բոլորովին առողջացաւ. բայց մնաց դեռ իմանալու ամենագլխաւորը, թէ տղան արդեօք ազատուած

էր իսկական ծաղկի վարակումից։ Այս հարցը վճռելու համար Ջէննեերը դարձ դրեց մի սարսափելի փորձ։ Այն է՝ վերցրեց նշտարով իսկական մարդկային վտանգաւոր ծաղկի հիւթը պատուաստեց նոյն տղային՝ մի երկու ամիս չանցած առաջի փորձից յետոյ։ Սպասելով թէ մի գուցէ խեղճ տղային բռնէ իւր ձեռքով տուած վտանգաւոր ծաղկի թոյնը —Ջէննեերը երեք հոգեմաշ և անտանելի օր ու գիշեր անցուց... բայց փառք Աստծո՛ւ, տղան բոլորովին անվնաս մնաց և ոչ մի հիւանդութիւն չունեցաւ այս սոսկալի փորձից, որովհետև *առաջի փորձով իսկական ծաղկի վարակումից նա ապահովուած էր:*

Այսպէս կատարուեց գիտութեան ամենաբարերար գիւտերից մէկը, թէև նա մեծ տանջանքներ պատճառեց գիւտն անողին...

Այնուհետև Ջէննեերը հետևեալ կերպ մտածեց։ Կովի ծաղկով վարակուած մարդը երբէք չի մնասուում, բայց միևնոյն ժամանակ դրանով նա ազատւում է աւելի վտանգաւոր և սարսափելի մարդկային ծաղկից։ Ուրեմն՝ լաւ չի լինիլ, որ բոլոր մանուկներին պատուաստենք կովի ծաղիկը, որ բոլորն էլ ազատուեն իսկական ծաղկի չարիքից։ Մտածեց և կատարեց, երբ մի անգամ Ջէննեերի ապրած գիւղում ծաղիկը նորից սկսեց սաստկանալ և կոտորել ժողովրդին։ Նա հաւաքեց կովի ծաղկի բշտիկներից բաւականին նիւթ (ափիշ) և պատուաստեց բոլոր առողջ մանուկներին։ Այսինքն՝ ինչպէս

առաջի փորձում, առողջ երեխայի թևի կաշին քերծում էր նշտարով կամ փոքր ինչ ճեղքում և վրան քսում էր կովի ծաղկի հիւթը. մի քանի օրից յետոյ՝ բոլոր երեխաների թևերի վրայ դուրս եկան իսկ և իսկ կովի ծաղկի նման բշտիկներ, մի երկու շաբաթից էլ բշտիկները փչկուեցին՝ չորացան։ Այժմ արի՛ ու տես, որ այդ երեխաներից ոչ մէկին դարձեալ չբռնեց այն ժամանակ զիւղում տարածուած իսկական ծաղիկը...

Ջէնների ուրախութեանը էլ չափ չկար, որ վերջապէս դանուեցաւ հնար պաշտպանել ամբողջ ժողովուրդը ծաղկի աւերումներից։

Նա դրեց այդ մասին Անգլիայի ու օտարերկրեայ ուրիշ բժիշկներին։ Սրանք էլ ամեն տեղ սկսեցին նոյն փորձերը կատարել և դուրս էր գալի ամեն տեղ միևնոյն բանը. ում որ պատուաստում էին կովի ծաղիկը, ինչպէս Ջէնների՝ սովորացրել էր, նրան այլևս իսկական ծաղիկը չէր դիպչում։

Այժմ եւրոպական պետութիւններում հազիւ կը պատահի երեխայ, որ վաղորդայն կովի կամ հոլթի ծաղկով պատուաստուած չլինի և այդ պատճառով իսկական ծաղկից մեռնողների թիւը այդ տեղերում շատ քչացել է։

Գերմանիայում 24 տարի որանից առաջ օրէնք հրատարակուեց որով բոլոր ծնողները պարտաւորուեցան իւրաքանչիւր մանկան պատուաստել ծաղիկը ոչ թէ մի անգամ, այլ և երկրորդ անգամ,

10 տարեկան հասակում։ Երկրորդ անգամ պատուաստելու պատճառն այն է, որ փորձերից երեւաց, որ ամեն մի պատուաստումը երեխային պաշտպանում է իսկական ծաղկի հիւանդութիւնից միմիայն 8 կամ 10 տարի։ Այս կրկնապատուաստի ընդունելու ժամանակից սկսած՝ իսկական ծաղիկը Գերմանիայում տարէ տարի պակասելով՝ հիմի էլ բոլորովին անհետացել է. այնպէս որ այդ երկրում մարդիկ այժմ իսկական ծաղկի հիւանդութեան ինչ տեսակ լինելն էլ չեն իմանում։

Մեզանում դժբախտաբար այդպէս չէ. մեր գիւղերում ու փոքր քաղաքներում քանի քանի դերդաստաններ թողնում են իրանց երեխայոց առանց պատուաստի. կան մեզանում դեռ շատ պառաւներ և տատեր, որ ծաղկի դէմ միջոցներ գործածելը և ծաղիկ կտրելը մեղք են համարում։ Մարդ հարցնէ դրանց թէ ախա՛ր ինչ մեղք բան է, եթէ մարդս իր զաւակների մասին հոգ տանի առաջուց, որ նրանք չկուրանան կամ չայլանդակուեն։ Ապա տեսէք թէ մի գիւղում, ուր ժողովուրդը պատուաստից փախչում է, իսկական ծաղիկը ինչ սարսափ է ձգում չորս կողմը. որի տանտէրը կուրացաւ, որոնց տընտու մայրը ծաղկից էն աշխարհը գնաց, այս տանը բոլոր երեխայքը կոտորուեցին, այն տանը մարդու տալու աղջկայ երեսը այլանդակուեց... որ մէկը պատմեմ, լացն ու կոծը մինչև երկինք է հասնում։ Ո՞վ է մեղաւորը. մարդիկ իրանք—որ իրանց չուզենան օգնել, Աստուած ինչ անէ...

Ահա այդ տեսակ անհոգ և անտիսապաշտ մարդկանց երեսից մեկանում ծաղիկը ամեն տարի մեն է գալի գիւղից գիւղ, քաղաքից քաղաք և անհամար գոհեր է տանում և դեռ որքան էլ կոյրեր է թողնում այս աշխարհում թափառելու իբր կենդանի օրինակներ ծնողական անհոգութեան։ Կարող է պատահել, որ պատուաստածներն էլ ծաղկի տարածման ժամանակ հիւանդանան իսկական ծաղկովակայն փորձը ցոյց է տալի, որ դրանց հիւանդութիւնը թեթև է լինում և ապդպիսիներին ծաղկից շատ հազիւ է պատահում մահ կամ կուրութիւն. այդ էլ նրանց կպատահի, որ մի անգամ միայն պատուաստուած են՝ շատ փոքր հասակում։ Իսկ կրկին անգամ պատուաստածները թէ բռնուին էլ ծաղկից, միայն թեթև չեչոտութիւնով կազատուին նրա ճանկից։

Այս ամէնը իմանալուց յետոյ ծնողները անշուշտ պարտական են պատուաստել իրանց մանուկին, հէնց որ սա չորս կամ հինգ ամսական դառնայ։ Ուրեմն կամ տասը տարեկան հասակում նոյն երեխային պէտք է անպատճառ նորից ծաղիկը կտրել։ Իսկ երբ քաղաքի մի թաղում կամ մի գիւղում ծաղիկը սաստիկ տարածուի, այդ դէպքում պէտք է պատուաստուին թէ մեծ և թէ փոքր, թէ երիտասարդ և թէ մանուկ. այդպէս որ անէր, շատ շուտով պատուհասը ձեր գիւղից կվերանայ և կկորչի։

— Ոչինչ վնաս պատուաստումից չի պատահի, եթէ դրա համար դիմէք բժշկին կամ ֆելդշերին, որոնց

բժշկական վարչութիւնը տալիս է հոբթի կամ կովի ծաղկի հիւթ և զրկում է գիւղերը պատուաստի համար։ Դէ՛հ, էլ ուր էք թաքցնում ձեր երեխայոց դրանցից, էլ ինչ էք փախչում պատուաստից։ Ուզում էք ձեր ապագայ սերնդի անէծքին արժանանալ ձեր անհոգութեան կամ անտիսապաշտութեան համար.....

Հիմի լսեցէք թէ ո՛ր ժամանակներում պէտք է երեխի ծաղիկը կտրել և ի՞նչ խնամատարութիւն է հարկաւոր այդ դէպքում։

Վերը ասացինք, թէ պէտք է պատուաստել ծծկեր երեխային, երբ սա չորս կամ հինգ ամսական դառնայ։ Դ հարկ է, երբ որ մանուկը թոյլ է կամ հիւանդ է, կարելի է յետաձգել պատուաստը մինչև նրա առողջանալը։ Սակայն երբ գիւղում յանկարծ սկսում է տարածուել ծաղիկը, այդ դէպքում էլ հարկ չըկայ սպասելու 4—5 ամիսը լրանալուն, այլ անմիջապէս հարկաւոր է պատուաստել թէկուզ 3—4 շաբաթուայ ծծկերներին։

Որտեղ բժիշկ կայ, պէտք է հիւանդ երեխային նրան ցոյց տալ. բժիշկը կարող է որոշել՝ որ հիւանդին կարելի է պատուաստել ծաղիկը, որին չէ. որովհետև ամեն տկարութիւն պատուաստումից հօ՛ չի վատանում։

Սովորաբար ծաղիկը կարում են գարնանը կամ աշնանը. բայց երբ գիւղում երևայ ծաղկի համաճարակը, պէտք է պատուաստել առողջ մանուկներին տարուայ որ եղանակին էլ պատահի։ Շատ մայրեր վախենում են ձմեռ ժամանակ պատուաստել

իրենց երեխային։ Դա աւելորդ վախ է։ Անշուշտ պէտք է զգուշանալ երեխային մրսեցնելուց և դրա համար բաւական է, որ ծծկերին պատուաստումից յետոյ երկու շաբաթ դուրս չբերէք սաստիկ ցրտերին. իսկ տաք ժամանակ հարկաւոր է դուրս բերել ամեն օր։ Պատուաստումից առաջ պէտք է երեխային լողացնել և մաքուր շապիկ հագցնել, լայն թեւերով։ Պատուաստումի չորրորդ օրից, երբ կերևան ծաղկի բշտիկները, մինչև տասն և չորս օր, երբ նրանք կչորանան, այլ ևս չպէտք է լողացնել երեխային։ Այդ միջոցում հարկաւոր է երեխայի միայն երեսը և կեղտոտ տեղերը լուանալ, շուտ—շուտ փոխել վրայի շապիկը և առհասարակ փոխնորդը։

Պատուաստումի ութերորդ կամ տասներորդ օրը, մանուկը փոքր ինչ սկսում է ջերմել, լաւ չի քնում. անհանգիստ է։ Փորձառու մայրերը գիտենալով, որ դա պատուաստի սովորական ընթացքն է, իրանք էլ ի զուր չեն շփոթուում։ Երբ ծաղկի բշտիկները սկսում են լցուել, նրանց շուրջը բաւական կարմրում է։

Սակայն կպատահի երբեմն, որ այդ կարմրութիւնը տարածւում է բոլոր ուսի վրայ և մանուկը շափազանց անհանգիստ է դառնում, անդադար լաց է լինում, որովհետև կարմրած թեւիկը այրւում է և քոր է գալիս։ Պէտք է այդպիսի դէպքում դիմել բժշկի, եթէ կայ. եթէ ոչ՝ պէտք է գոնեա կարմրած տեղին մաքուր կարագ քսելով՝ փորը ինչ հանդարտեցնել այդ այրոցը և քորը։

Երբեմնապէս ծաղկի բշտիկները իւր ժամանակին չեն չորանում, այլ ջրջրոտում են, երբ երեխային մաքուր չպահեն, կեղտոտ շորերը չփոխեն։ Շատ անգամ էլ երեխան առանց հոկողութեան մնալով, անհանգստանալուց իւր մատիկներով պոճկում է թեւի բշտիկները և նրանց տեղը խոց դարձնում, որ դարձեալ բժշկի հոգացողութեան է կարօտ։

Այս էլ կպատահի, երբ պատուաստում են երեխային կովի ծաղիկը, լաւ բռնում է պատուաստը թեւին. մեկ էլ տեսար երեխայի փորի և ոտիկների վրայ էլ երևեցան մի քանի բշտիկներ։ Մայրերը շատ անգամ այդ բանից մեծ վախ են զգում թէ՝ մի գուցէ իսկական վտանգաւոր ծաղիկ պատուաստեցին խեղճ երեխային։ Սակայն հարկ չկայ վախենալու, որովհետև կովի ծաղկի պատուաստից մարդկային իսկական ծաղիկ չի դուրս տայ մարմնի միւս մասերում, այլ նոյն կովի ծաղիկը կլինի, որ յամենայն դէպս անվնաս է։

Մայրը շուտով ինքն էլ համոզւում է, որ մարմնի վրայ դուրս տուածից ոչինչ վտանգ չաւելացաւ երեխային, փորի վրայի բշտիկները շատ շուտով չորանում են և աւելի շուտ անհետանում, քան թեւի սկզբնական բշտիկը։

Ուրեմն առ հասարակ՝ կովի ծաղկի կանոնաւոր պատուաստումից վնաս չկայ։ *)

---

*) Ով կամենայ աւելի մանրամասն ծանօթանալ ծաղկահատութեան և Ջէննրի գիւտի պատմութեան՝ թող կարդա հետևեալներին. 1. Դոկտ Փէլտիմաչեանի օգտակար երկը՝ «Պատուաստման Պատմութիւն» հրատ. Պոլիս. 1884 թ. 2. Տիկ. Տիրուհի Բաբայեան-Կոստանեանցի (տիկ. Մարգարիտ) «Ջէններ» վերնագրով ժողովրդական հետաքրքիր գրկոյկը. Մոսկուա 1890 թ. Ծանօթ. Թարգ.

2. ՔՈՒԹԻՆ ԿԵՄ ՍԿԱԲԼԵՏԻՆԸ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Փոխադր. բժշկապ. Ա. Բարայեանի

Քութէշը կամ սկառլատինան բաւական վտանգաւոր հիւանդութիւն է, նա երբեմն հնձում է շատ մատաղ կեանքեր։ Գիտնալու է որ ինչ երեխայ ունեցել է մի անգամ քութէշ, դժուար թէ կրկին անգամ էդ ցաւից նա բռնի։

Ո՞վ չէ խմանում, որ քութէշը, ինչպէս և կարմրուկը, փոխւող-դիպչող ցաւ է. մէկ հիւանդ երեխէն դեռ չառողջացած, տեսնում ես, որ միւսն էլ նոյն ցաւից բռնուեց, յետոյ՝ երրորդը, և այդպէս հիւանդանում են գրեթէ տան բոլոր մանուկները։

Պատահում է, որ երբ մի տան մէջ քութէշ է ընկել, մէկ էլ տեսար՝ հիւանդութիւնը երևցաւ հարևանի երեխէրի վրայ, էդ տեղից էլ ցաւը թռաւ քաղաքի կամ գիւղի շատ հեռաւոր ծայրը, եթէ էստեղից մարդիկ եկել-գնացել են առաջւայ հիւանդների մօտ։ Էնց, ասենք, ուրիշ քաղաքից կամ գիւղից մէկը եկել է հիւր քութէշաւոր մի տուն. յետոյ հիւրը առողջ վերադառնում է՝ իր գիւղը։ Մի երկու շաբաթ չի անցնի, կըտեսնես, որ էդ գիւղումն էլ երևցաւ մէկի միւսի վրայ. էսպէս ցաւը տարածւում է հա՜ տարածւում...

Քանի որ քութէշը, ինչպէս և կարմրուկը հիւանդից փոխւում է առողջին. մէկից կպչում է միւսին և վարակում չորս կողմը, էդ պատճառով էլ նա համարւում է տարափոխիկ կամ վարակիչ հիւանդութիւն։

Հիւանդը իր հնչող թունաւորում կամ վարակում է շրջապատող օդը, իր մարմնով—անկողինը և վրայի հագուստը. ի հարկէ, եթէ մի ուրիշ մանուկ նոյն օդը կըշնչէ, հիւանդի անկողնի կամ շորերին կըդիպչի, ինքն էլ կըստանայ թոյնը և կըհիւանդանայ քութէշով։ Պըպատահի, որ մէկը քութէշաւորի մօտիցն է գալի, ինքը չի հիւանդանայ, ինչպէս վերևը յիշեցինք, բայց հետը՝ իր շորերի վրայ բերած անհկատելի թոյնովը կըվարակէ ուրիշ շատ առողջ մանուկներին։

Հիմի ծանօթանանք քութէշի նշաններին։

Քութէշը որ բռնեց մի երեխի, 4—7 օր բոլորովին անհկատելի է մնում, մէկ էլ յանկարծակի իրան ցոյց է տալի։ Առաւօտը երեխէն առողջ էր երևում. ըստ սովորականին գնաց ուսումնարան կամ թէ չէ, զարթ խաղում էր, իսկ երեկոյեան մի անգամից սկսեց *սրսփալ* կամ *մրսել*, դանդատւել թէ գլուխը սաստիկ ցաւում է, սիրտը (ստամոքսը) խառնում է, ուտել չէ ուզում, էդ պատճառով էլ տոքի վրայ կամ նստած չի կարող մնալ,—պառկում է, սկսում է *դողացնել*, կուչ է գալի, վերմակի մէջ փաթաթւում։ Մի քիչ անցած՝ երեխէն սկսում է *տաքանալ* կամ սաստիկ *ջերմել*, հիմի դիպի վրայից շաղտում է, ուզում է բացւել, *էրոցքի* մէջ խօսում է շփոթ կամ դառանցում է։ Ամբողջ

գիշեր երեխէն ործկում է, կերածը յետ է ածում, շատ անգամ էլ կերածի տեղ մաղձն է յետ գալիս։ Հիւանդութեան սկզբից 24 ժամ անցած-չանցած՝ երեխի մարմինը դուրս է տալի, սկսում է կարմրել, տեղ-տեղ կարմիր ղումաշի զոյն է դառնում։

Ահա, էս առաջի նշաններով՝ հէնց միւս օրանից քութէշը կարելի է զանազանել կարմրուկից, որ իրան ցոյց է տալիս կամաց-կամաց. մեծ մասով կարմրուկում երեխէն դեռ հարբուխ է ընկնում, սկսում է շատ հազալ, յետոյ տաքութիւնը բարձրանում է, աչքերը կարմրում են. 3—4 օր էսպէս անցնում է, հիմա նոր սկսում է երեսը դուրս տալ, յետոյ կարմրութիւնը անցնում է մարմնին։

Այն ինչ՝ քութէշումը երեխի բիթը, պռօշները, ծնօտը շատ անգամ բոլոր երեսը ազատ են մնում կարմրութիւնից, սա սկզբից երևում է մարմնի վրայ մեծ-մեծ ղումաշի բծերով։ Երեխէն էդ ժամանակ ոչ թէ հազում և փռնգտում, այլ գլխաւորապէս գանգատւում է բկից, կուլ տալիս՝ անտանելի ցաւ է զգում. երեխի բերանը որ բաց անել տաս և ներսը մտիկ տաս՝ բուկը ներսիցը խիստ կարմրած կըտեսնես և ուռած. շատ անգամ սպիտակ փուռեր են երևում բկի նշալների վրայ։ Դրսից շլինքի գեղձերը (խուլերը) նոյնպէս մի քիչ ուռչում են և ցաւում։

Մարմնի էրոցքը կամ տաքութիւնը և կարմրութիւնը սովորաբար տևում են 3—4 օր, երբեմն փոքր ինչ աւելի. հիւանդի լեղուն էդ միջոցին խիստ

կարմիր մորի (մալինի) կերպ է դառնում։ Դրանից յետոյ, եթէ հիւանդութիւնը դէպի լաւն է գնալու, ջերմը քիչ-քիչ պակասում է. 7—9 օրում բոլորովին իջնում է. կարմրութիւնը գունաթափւում է և կորչում։ Այժմ մարմինը սկսում է թեփոտիլ, մանաւանդ բռներից (ափերից) և մատներից թեփը սկսում է թափւել մեծ մեծ կտորներով։ Երբեմն հին մաշկը (մորթը) մատների վրայից երբ ձեռնոց դուրս է գալի, ու հիւանդը սկսում է առողջանալ։ Ահա էստեղ էլ զանազանութիւն կայ կարմրուկից. սա էլ թեփոտիլ ունի, միայն սրա թեփը բարակ աւազի նման է, երբեմն հազիւ նկատելի։

Ասացինք, որ քութէշի թէփը որ սկսում է երևալ, հիւանդութեան երկրորդ շաբաթի կիսից երեխէն սկսում է լաւանալ։ Բայց միշտ այդպէս բարեյաջող չի գնում բանը։ Մէկ էլ տեսար՝ հիւանդութեան հէնց երկրորդ կամ երրորդ օրը, սաստիկ ջերմի և բկուռուցքի ժամանակ երեխէն վախճանւեց... Երբեմն էլ քութէշը անցնում է, էլ ոչ կարմրութիւն և ոչ բգացաւ... Բայց երրորդ շաբաթն է, որ երեխէն մնում է անկողնում կամ ման է գալի՝ թոյլ, մաշւած, գունաթափ. կամաց-կամաց նրա փորը ջրգոլում է, երեսը և բոլոր մարմինը ուռչում, կընշանակէ հիւանդի ներսում (երիկամունքում) ցաւի հետևանքը (հարբուքը) մնաց, էլ դժւար թէ երեխէն ցաւիցը պրծնի։ Պատահում է որ էդ դէպքերում հիւանդի վզի ուռած խուլերը ըսկսում են թարախոտել, ականջների փոսից ե-

ինում է։ Ժամերը. երեխի յօդուածները (խաղերը) սկսում են ուռչել և սաստիկ ցաւել. էդ թարախներից և յօդուածացաւերից էլ կըպատահի, որ երեխէն յանկարծ կըվախճանի։

Հիմի լսեցէք թէ՝ ինչ պէտք է անել, երբ մի տան մէջ քուլթէշ երևաց։

Ամենից լաւը կըլինի իսկոյն տանել հիւանդանոց. էնտեղ հիւանդին համ կարգին կըպահեն, համ էլ տանը մնացածները և հարևանները գուցէ ազատուեն վարակումից։ Եթէ հիւանդանոց չըկայ էնտեղում, պէտք է գոնեա դիմել տեղական բժշկին, որ սա ցոյց տայ ինչպէս պահպանել և խնամել հիւանդին և ինչպէս առողջներին ազատել վտանգից։ Բայց բան է ու գիւղ տեղ է՝ բժիշկ էլ չըկայ կամ նա շատ հեռու է, շուտով չի հասնիլ։ Պէտք է ուրեմն՝ ամեն մարդ իմանայ՝ ինչպէս հոգ տանել քուլթէշաւոր երեխի մասին։

Հետևեալ խրատներից ինչ որ սովորէք քուլթէշի համար, պէտք է գիտենաք, որ նոյնը կըհարկաւորի և կարմրուկում և միւս վարակիչ ցաւերում։

1. Առաջի գործն է հիւանդին պառկեցնել յարմարաւոր անկողնում։ Հարկաւոր չէ հիւանդի տակը դնել հագուստեղէն կամ մուշտակ և ուրիշ փափուկ շորեր. աւելի լաւն է՝ հիւանդի տակը փռէք մի մեծ տոպրակով (մէշոքով) խոտ կամ յարդ (դարման), որ յետոյ կարելի լինի կրակ տալ (այրել), այն ինչ՝ հագուստեղէնը կամ մուշտակը դժուար է

խտակել քուլթէշի վարակից, իսկ այրելը չըպիտի դըմբշիք (ուզենաք)։

2. Պէտք է քուլթէշաւոր երեխին պառկեցնել գոմանոցից հեռու մի առանձին օթախում կամ տան անկիւնում, ուր մաքուր օդ լինի որ հիւանդը կարողանայ ազատ շունչ քաշել. սրա համար հարկաւոր է ամառ ժամանակ պատուհանները և դռները բանալ, իսկ ձմեռը բուխարի երթիկի ծակը բաց թողնել (եթէ քամի չըկայ), որ վատ ուներսած օդը էդ ծակովը դուրս գայ։ Հիւանդի վրայ ամառը ծածկել չարսաւ. իսկ ձմեռը մի հաստ փալաս, որ յետոյ հեշտ լինի տաք ջրում լուալը։ Առհասարակ՝ էն տան, էն խրճիթի մէջ կամ էն օթախում, ուր քուլթէշաւոր հիւանդն է, պէտք է խիստ մաքրութիւն պահել. կերակրի մնացորդները, լացքի ջրերը, հիւանդից դուրս եկածը (արտաթորութիւնները) չըպէտք է թողնէք խրճիթի մէջ մնան. իսկոյն պէտք է բոլորը դուրս թափէք մի առանձին փոսում, որ դուրսը կըփորէք և ամեն անգամ շոր հող կ'ածէք ձեր դուրս թափածի վրայ։ Հիւանդին երբէք թոնիրի մօտ չըպէտք է տեղաւորել։

3. Մեր հասարակ ժողովրդի և գիւղացիների մէջ մի սխալ կարծիք կայ թէ քուլթէշաւոր երեխին չըպէտք է լալ, մաքրել. որ իբր թէ՝ պահպանողական հրեշտակը չըիսռովի, մանաւանդ որ մաքուր փոխնորդ հագցնես, իբր հոգէառը կուրախանայ— արանք դիվ անտի՝ անպէտք խօսքեր են... Ընդհակառակը՝ որքան երեխի մարմինը զով ջրով մա-

1009
39425

քըրւած լինի մաքուր անկողնում, մաքուր փոխնորդում լինի, էնքան աւելի Աստուած էլ նրան կըհովանաւորի։ Մէկ նախապաշարմունք էլ կայ Թիֆլիսի գիւղերում. հիւանդ երեխի շապկից և միւս շորերից կտորներ կտրում են և հագցնում են *խամճուկին* (տիկինին կամ *կուկլային*) և տանում դնում են ուրիշի տան դռանը որ, իբր ցաւը հիւանդի վրայից անցնի, կորշի ուրիշի դռները... Էս բանը ոչ միայն մեծ յիմարութիւն է, այլ և սոսկալի անիրաւութիւն։

4. Տաքութեան ժամանակ հիւանդ երեխի գըլխին ու ճակատին պէտք է դնել սառը ջրում թաց արած և քամած շոր. էդ շորը պէտք է շուտ-շուտ նորից թաց անել սառը ջրումը և փոխել, որ հիւանդի գլուխը զով մնայ. նոյնպէս կարելի է զովացնել խիստ տաքացած և կարմրած *մարմինը* թաց արած բամբակով, որը հեշտ է ամեն անգամ այրել կամ թոնիրը ձգել։

5. Փոքր հիւանդի բերանը օրը երեք անգամ պէտք է որբել մաքուր շորի կտորով, որ թաց է արած եփ տաք ջրում մի քիչ խունկ խառնած մէջը. իսկ աւելի մեծ մանուկներին ստիպել որ էդպէս ջրով բերանը և բուկը շուտ-շուտ ողողեն։

6. Հիւանդ երեխէն խիստ տաքութեան մէջ կերակուր չի վերցնում։ Շըպէտք է զօր անել, որ անպատճառ ուտէ, քիչ համբերել է պէտք, որ ախորժակը բացի և տալ նրան՝ եփած կաթ, կաթնապուր, կաթնով շիլա (կորկոտից), թերխորով ձու, աւելի սպիտակ հաց։ Ծանր կերակուրներ շըպէտք է տալ։ Հիւանդի ծարաւը կարելի է կատրել սառեցրած՝ բաց թէյով (չայով) կամ եփ տաք ջրով, որ սառեցրած է։ Էդ ջրի մէջ, ով ունի, կարող է ձգել փոքր կտոր լիմոնի կամ բալի (ֆիշնա) և հոնի մուրաբա (քաղցրաւենի)։

Այսքանով վերջացնում ենք քուլթէշաւոր հիւանդի վրայ անելու սկզբնական կամ գլխաւոր հոգատարութիւնը։ Բայց ձեր ամենամեծ հոգսը պէտք է լինի որ շըլմոլնէք ցաւը տարածւի ամբողջ քաղաքում կամ գիւղում, պէտք է ուրեմն մտաբերենք, ինչ որ վերը ասացինք։

7. Պէտք է առողջ երեխաներին հեռացնէք հիւանդից, կամ հիւանդին օր առաջ հեռացնէք հիւանդանոց կամ մի առանձին օթախ։ Որ տնում քուլթէշ է ընկել, էդ տեղից առողջ մանուկներին շըպէտք է թողնել ուսումնարան, թէ չէ ցաւը որ ուսումնարան ընկաւ, բոլոր թաղը կամ գիւղը կըվարակւի... Հասակաւորներն էլ շըպէտք է էդ տնից գնան ուրիշ տներ և սրանցից էլ հիւրեր ընդունեն։ Հարևանները էդ հիւանդոց տնից թոյլ փոխ չառնեն հագուստ, հաց, կաթ, սամի, լուծ և այլն։

8. Երբ հիւանդ երեխէն, Աստծու տաքով, առողջանայ, հարկաւոր է նրան լողացնել, որ թեփը շըմնայ մարմնի վրայ (երկրորդ շաբաթից), լաւ պէտք է սապոնով, յետոյ պէտք է հագցնէք երեխին բոլորովին մաքուր կամ նոր շորեր, նրա անկողնի խոտը կամ յարդը այրել կամ թոնիրն ածել։

9. Հիւանդի վրայի սպիտակեղէնը, երեսսրբիչը, աղլուխները, վերմակը պէտք է հաւաքել ի միասին, եռացած ջրի գոլորշիից անցկացնել և յետոյ լաւ սապնաջրով, մուշտակը պէտք է օդի տալ երկար ժամանակ առանձին տեղում։ Հիւանդի մահճակալը կամ պառկած տեղը, բոլոր խրճիթը կամ սենեակի պատերը ներսից պէտք է սրբել տաք սապնաջրով, ուր որ կայ բժիշկ կամ ֆելդշեր, նրանք կրկարգադրեն ինչով լաւ օթախի պատերը, յատակը և առաստաղը։

10. Տէրը մի արասցէ, եթէ հիւանդը վախճանի քութէշից, չըպէտք է մօտ թողնել ընկերներին հանգուցեալին տեսնելու։ Մեր ժողովրդում և մեր գիւղերում մի սովորութիւն կայ, որ հանգուցեալի հագուստը և նրանից մնացած ձեռքի բաները՝ սրան նրան ընծայում են իբր յիշատակ կամ իբր ողորմութիւն։ Քութէշաւոր և ուրիշ վարակիչ ցաւերից մեռածների մնացորդը ուրիշներին բաշխելը ոչ թէ բարեգործութիւն է, այլ կարելի է ասել, չարագործութիւն կամ մեծ մեղաս... Զգուշացէք ուրեմն էդպէս հիւանդների շորերը ընծայ վերցնել, էդ բաները նոյն իսկ յետին աղքատին ընծայելը—մեծ մեղք է։

Այս էլ չըմոռանանք վերջումը ասել. երբ քաղաքի մի թաղում կամ գիւղում քութէշ երևայ, հիւանդի տէրերը պարտական են Աստծու և մարդկանց առաջ՝ իսկոյն իմաց տալու թաղական բժշկին կամ մօտաւոր խշխանութեանը։

---

3. ՍԻՖԻԼԻՍ ԿԱՄ ՎԱՏ ՑԱՒ

Թարգմ. բժ. Վ. Արծրունու

Ոչ միայն քաղաքներում, այլև գիւղերում շատ կան *սիֆիլիսով* կամ *վատ ցաւով* հիւանդացած մարդիկ։ Հիւանդանում են մեծ ու փոքր տղամարդիկ ու կանայք, նոյն իսկ մանր երեխաներ։

Այս մի շատ վտանգաւոր ու ծանր հիւանդութիւն է, որովհետև այնպէս է քանդում առողջութիւնը, որ մարդս էլ չի կարող առաջուայ պէս աշխատել, իր արհեստը բանեցնել։

Ցոլի (*Արկուեոգիս*) կնանիք, եթէ այդ հիւանդութեան տէրն են, վիժում են, փչացնում իրանց փոքրի երեխան։ Եթէ պատահում էլ է որ երեխան ժամանակին ծնում է, արդէն ծնւում է այդ ցաւով վարակուած։ Աշխարհ են գալի էլի շուտով մեռնելու համար, կամ հիւանդ, ողորմելի կեանք վարելու համար։ *Ուրեմն ծնողներից հիւանդութիւնը անցել է երեխային։* Պատահում է, որ նորածնի վրայ սիֆիլիսի ոչ մի նշան չըկայ, երեխան բոլորովին առողջ է, ժամանակին է ծնուել և ծնողների ուրախութեանը չափ չըկայ։ Բայց երեխան մեծանում է, 10 - 12 տարեկան է դառնում և յանկարծ սկսում է հիւանդանալ, իր ծնողների ցաւով։ Մարմնի զանազան տեղերում խոցեր են դուրս գալիս, ոսկոր-

ները սկսում են փթթել, քիթը թափուում է ու 17—18 տ. ջահել տղան կամ աղջիկը այնպէս է այլակերպուում, որ նրան մտիկ տալն էլ զզուելի է լինում։

Այս հիւանդութիւնը մենակ հօ ծնողներից երեխաներին չի անցնում։ Հասակաւոր մարդիկն էլ, երիտասարդներն էլ, հասած աղջիկներն էլ, պառաւներն էլ կարող են *վարակուել* մի հիւանդ մարդուց կամ մի հիւանդ կնկանից։ Այդ պատճառով էլ ասում են, որ սիֆիլիսը *վարակիչ, կպչողական հիւանդութիւն է*։ Եթէ տան մէջ մէկը հիւանդանում է, նա կարող է տան բոլոր անդամներին էլ վարակել, այսինքն հիւանդացնել։ Մեծերից ցաւը կըկպչի երեխաներին էլ։ Կարող է պատահել, որ երեխայն մի հիւանդ կին (*օր. ծծմայրը կամ հարբեւանի կինը*) հիւանդացրել է։ Այդ երեխան կըվարակի մեծերին էլ։ Խօսքերից դուրս է գալիս, որ այս հիւանդութիւնը մեծ ու փոքր չի հարցնում, երեխայից անցնում է մեծին, մեծից երեխային։

Առհասարակ ժողովուրդը կարծում է, թէ այդ ցաւով միայն վատ վարք ու բարքի տէր մարդիկն ու կնանիքն են հիւանդանում յարաբերութիւնների միջոցով, բայց այդ կարծիքը բոլորովին սխալ է, որովհետև վատ ցաւը առանց սեռական յարաբերութիւնների էլ կարող է մէկից միւսին անցնել։ Օրինակ եթէ մէկի բերանի մէջ, պռոշների վրայ սիֆիլիսի պղտիներ, խոցեր կան ու նա մէկ առողջի հետ համբուրուի, այս խոցի, պղտիկի թոյներ կըդիպչի սրա պռոշներին ու կըհիւանդացնի սրան էլ։

Հիմի տեսնենք թէ առհասարակ ինչպէս է այս հիւանդութիւնը հիւանդից առողջին փոխուում։

Գիւղերում վատ ցաւը այսպէս է տարածուում։ Գիւղացիներից մէկը գնում է քաղաք բանտրութեան կամ առևտրի. այնտեղ յարաբերութիւն է ունենում մի անառակ կնկայ հետ, ստանում է նրանից սիֆիլիս, յետոյ վերադառնում է տուն ու իր կնոջը հիւանդացնում. յետոյ երկուսով էլ վարակում են իրանց երեխաներին ու տան միւս կենդանիներին։ Երեխաները խաղում են հարևանների փոքրերի հետ, համբուրում են նրանց, կամ միևնոյն խաղալիկներով խաղում, նրանց էլ հիւանդացնում։ Այս փոքրերը այնուհետև կարող են իրանց ծնողներին վարակել և այլն։

Բանտրները, կամ արհեստաւորները միասին ապրելով կարող են իրար տալ իրանց հիւանդութիւնը, եթէ օրինակ մէկը հիւանդի դդալը բերանն առնի, նրա թասով, կամ բաժակով խմի, նրա երեսսրբիչով և գոգնոցով սրբուի, նրա ծխած ծխախոտը, չիպուխը կամ դայլանը ծխի, կըվարակուի։ Ինչի, որովհետև երբ որ հիւանդը այդ բաները գործ է ածում, նրա վէրքերի թոյնը քսուում է այդ բաներին։ Շատ հիւանդանում են մարդիկ գինետներում, միևնոյն բաժակով գինի, արաղ խմելիս։ Գոշկակարները երբեմն հիւանդանում են այն պատճառով, որ վերցնում են և բերանները դնում մի արկղիկի միջից մեխերը, էլ չեն մտածում, թէ կարելի է այդ մեխը մի սիֆիլիսոտի բերանումն է

եղել։ Դերձակները, սպիտակեղէն կարողները կօշկակարների նման վատ սովորութիւն ունեն. կոճակներն ու շանդալները բերաններն են առնում ու աւելորդները նորից վայր գցում արկղիկի մէջ։ Դարելի է վարակուել նոյնպէս և բաղնիքներում և արտաքնոցներում, եթէ նստենք մի տախտակի վրայ, որի վրայ մեզնից առաջ նստած է եղել մի հիւանդ ու իր խոցերի թարախը քսել այդ տախտակին։ Շատ կանայք հիւանդանում են նրանից, որ ծիծ են տալիս սիֆիլիսոտ երեխայի։

Պատահում է, որ բոշաները, հովիւները տանից տուն մանգալով՝ տարածում են սիֆիլիսը։

Բայց ամենից շատ վարակւում են մարդիկ, երբ որ յարաբերութիւն են ունենում անառակ կանանց հետ։

Ինչպէս է թոյնը մտնում մեր արեան մէջ։

Շատ հեշտ կերպով, անդամի, պռօշների վրայ միշտ մի աննշան քերծուածք կամ ճեղքուածք կայ, որ մենք խակի չենք էլ կարող տեսնել, եթէ սիֆիլիսի թոյնը դիպչի այդ տեղերը, իսկոյն կը ծծուի արեան մէջ ու կը հիւանդացնի։ Այս բոպէից սկսւում է այդ խեղճի վարակումն։

Վարակումից մի քանի ժամանակ անց (մի շաբաթ, մի ամիս, 6 շաբաթ), այն տեղում, որտեղ դիպել է սիֆիլիսի թոյնը, երևում է մի փոքրիկ խոցիկ (որը կոչւում է *շանկր*)։ Եթէ վարակուիլը զգալի կամ թաքնի միջոցով է եղել, այն ժամանակ առաջի խոցիկը դուրս է գալիս պռօշների կամ լեղուի վրայ կամ բերի մէջ. եթէ մի կին երեխայի

ծիծ տալիս է վարակուում, շանկրը դուրս է գալիս նրա ծծի պտուկի վրայ։

Շանկրը առհասարակ շատ շուտով (մի երկու շաբթում) հէնց առանց բժշկութեան էլ է անցկենում։ Բայց անցնում է 5—6 շաբաթ և արդէն երևում են ուրիշ բաներ (*արտայայտութիւններ*). օրինակ՝ մարմնի վրայ զանազան բծեր, պղտուկներ, դուրս տուածներ, բերնի մէջ վէրքեր ու խոցեր այս ցաւերից (դուրս տուածներից) երևում են նոյնպէս առնանդամի վրայ, նստելատեղում, ոտերի մատերի արանքը, նրանք շուտով ջրջրոտում են և թարախանման հեղուկ (ջուր) տալիս։ Հէնց այս ջրջրուկների արտադրած հեղուկն է, որ պահում է իր մէջ սիֆիլիսի թոյնը և այդ պատճառով էլ նա վարակիչ (թունաւորող) զօրութիւն ունի ու նրա միջոցով է որ հիւանդութիւնը տարածւում է։ Բացի այդ, բուկը, կոկորդը նոյնպէս հիւանդանում են, որից ձայնը խռպոտ է դառնում. յետոյ գլխի մազերը թափւում են, եղունգները փշանում են, աչքերը ցաւկոտում։

Այս երևոյթները (հիւանդութեան նշաններ) անցնում են, յետոյ նորոգւում ու այսպէս կարող են կրկնուել մի քանի անգամ։

Անցնում է մի քանի ժամանակ, մի տարի, երկու տարի և աւելի, սիֆիլիսոտը իրան առողջացած է համարում, երբ յանկարծ մարմնի վրայ կաշու տակ դուրս են գալիս մեծ-մեծ խոցեր, որոնք թարախակալում են, բացւում են ու դառնում են

խոցեր։ Այսպէս խոցեր մենակ կաշու տակը չեն լինում, այլ դուրս են գալիս մարդու ներսն էլ, օրինակ լերդի, փայծախի, պլոճիկների, թոքերի վրայ, որից հիւանդը և կարող է մեռնել։ Ամենից շուտ վնասուում են ոսկորները։ Ոսկորները (օր. ոտի, թևերի ոսկորները) տեղ-տեղ հաստանում, ուռչում, ցաւում են։ Հիւանդները սաստիկ ցաւեր են զգում ոսկրների մէջ։ Այնպէս որ չեն կարող քնել։ Մի քիչ յետոյ ուռուցքը խոցանում է, ծակուում ու այդ ծակից փթած ոսկրի կտորները դուրս են գալիս։ Այս բանը շատ յաճախ, պատահում է քթի մէջ։ Քիթը, ինչպէս գիտէք, երկու անցք (ծակ) ունի, մէջտեղը պատ է դրած։ Այդ պատի ետևի (խոր) մասը ոսկրից է։ Հէնց այդ ոսկորն է, որ ամենից շուտ փթում է։ Երբ որ քթի միջնապատի այդ ոսկորը սկսում է փթել, քիթը սկսում է ցաւել, հարբուխ է դառնում ու քթից մի տեսակ հոտած արնախառն ժահր է ծորում։ Մի քիչ յետոյ ոսկրի կտորները մէկ մէկ վայր են ընկնում ու քիթը ըչչում է։ Դրուստ է ասած, թէ «քիթը թափուում է»։

Եթէ հիւանդը չի բժշկուել, նա կարող է հարիւր տեսակ ցաւեր ստանալ։ Աչքերը կարող են քոռանալ, ոտքերից կամ ձեռքերից անդամալոյծ դառնալ կամ խելքը կորցնել—գժուել։

Վատ ցաւը կարելի է բժշկել։ Այս պէտք է լաւ հասկանան ամենքն էլ. ով որ ժամանակին դիմել է բժշկի և կատարել նրա խրատները, նա կազատուի իր ցաւից։ Բայց այն հիւանդը, որ փոխա-

նակ բժշկի հրամանները կատարելու՝ ականջ կը-դնի պառաւների խրատներին, նա իսկի թող յոյս չունենայ, թէ կըբժշկուի։ Ինչի կըհարցնէք, որովհետև պառաւները, մոլլաները և այդպիսի տգէտ մարդիկ լաւ չեն հասկանում այդ հիւանդութիւնը և գործ են ածում չափազանց թունաւոր դեղեր և յօնքը շինելու տեղ, աչքն էլ հանում են։

Պատահում է, որ սիֆիլիսը ծածկուում է մի քանի ամիս կամ հէնց մի քանի տարի ու յանկարծ նորից երևում է։ Զըպէտք է վախենաք, յուսահատուէք կամ կարծէք թէ՝ բժիշկը լաւ չի բժշկել։ Իմացէք, որ այդ հիւանդութեան սովորութիւնն է։ Ամեն երևալուն, էլի գնացէք բժշկի մօտ ու բժըշկուեցէք։

Եթէ մէկը անբախտութիւն է ունեցել, հիւանդացել է, նրա սուրբ պարտքն է, որ զգոյշ լինի, ուրիշին էլ չըվարակի։ Նա էլ չըպէտք է յարաբերութիւն ունենայ ոչ իր կնոջ, ոչ էլ ուրիշ կանանց հետ. նա իր ամանը, իր բաժակը, գդալը, չանգալ-դանակը առանձին անի եւ գործածելուց յետոյ, լաւ լուանայ ու պահի, որ ուրիշները գործ չածեն։ Նա նոյնպէս պիտի առանձին սպիտակեղէն (փոխնորդ), ջոկ երեսսրբիչ, ջոկ սաւան ունենայ, իր վէրքերը պիտի մաքուր պահի, եւ վրայի բամբակն ու կապերը ղէս ու ղէն չըգցի։ Զըպէտք է ամեն տեղ թքի, իր ծխախոտը, իր չիբուխը ուրիշի ըներանը դնի։

Իր սեղմական անձի մասին էլ պիտի մտածի

հիւանդը։ Նա պիտի կատարի բժշկի պատուէրները, թէ ուտելիքի և թէ խմելիքի մէջ։ Ամենից առաջ նա պէտք է ձեռ վերցնի գինուց ու արաղից, որովհետեւ արբեցողները չեն լաւանում, կամ շատ դժուար են լաւանում։

Սիֆիլիսոտը, կարող է ամուսնանալ թէ ոչ։ Կարող է, միայն միշտ պէտք է այդ բժշկի խորհրդով անել։ Իսկ բժիշկը խորհուրդ կըտայ եթէ կըտեսնի, որ հիւանդը բոլորովին առողջացած է։ Եթէ հիւանդ-հիւանդ պսակուի, նա մէկ որ իր անմեղ կնոջն էլ կըվարակի, մէկ էլ որ կամ կինը չըբերը կը մնայ, կամ հիւանդոտ զաւակներ կունենայ։

Առհասարակ պիտի հիւանդութեան առողջանալուց երեք տարի անցած լինի, որ կարելի լինի պսակուել։

---

4. ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԾԾԿԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Թարգ. Տիկ. Ս. Բաբայեանի

Շատ յաճախ փորը երեխէքը հիւանդանում և մեռնում են փորլուծից մանաւանդ ամառ ժամանակ, դրա գլխաւոր պատճառն այն է, որ շատ մայրեր չեն խմանում իրանց մանուկներին կանոնաւոր կերպով ծիծ տալը։

Ամեն մի մայր, եթէ նա առողջ է, պէտք է ինքը կերակրէ իր ստինքով (ծծով) իր մանուկին, որովհետև մօր կաթն երեխայի համար ամենաբնական և սննդարար կերակուրն է։ Բայց կրծքով կերակրելն ունի իր կարգ ու կանոնը նայած երեխայի հասակին։

Այս պատճառով խիստ պահանջւում է հետեւեալ կարգը պահպանել. մինչև վեց ամսական հասակը պէտք է ծիծ տալ երեխին ոչ աւելի, քան ամեն երկու ժամից յետոյ, ընդամենը վեց անգամ ցերեկը և երեք անգամ գիշերը։ Իսկ վեց ամսից յետոյ՝ չորս անգամ ցերեկը և երկու անգամ գիշերը։

Մայրերը մի վատ սովորութիւն ունեն, այն է՝ մանկիկի բերանը ծիծ են դնում, հէնց որ սա ձայնը բարձրացնում է։ Շուտ-շուտ կերակրելը երեխին շատ վնաս է տալի. դրանից նրանք փոխում են, նրանց փորը փքւում է, սաստիկ ցաւում և յա-

ճախ լուծում։ Եթէ երեխէն անհանդիստ է և բղաւում է, էդ չէ նշանակում, որ նա քաղցած է։ Պէտք է նայել թէ արդեօք նրա տակը հո՞ թաց չէ, կամ կեղտոտած. մրսում է՞ երեխէն, թէ տաքից է նեղւում, չէ՞ սեղմում նրան բարուրը, կամ չէ՞ կծում նրան բալլինջը կամ մի ուրիշ միջատ։

Ահա դեռ այս ամենը պէտք է կարգի դնել և չշտապել կերակրելու երեխին մինչև որոշած ժամը։

Պէտք է ծիծը հերթով տալ—մէկ անգամ աջը և միւս անգամ ձախը։ Ամեն անգամ թողնելու է ծծել ստինքը, մինչև որ երեխէն ինքը դադարի։ Հիւանդ ծիծն իսկի չպէտք է երեխին տալ։ Մանկան կերակրելիս մայրը պէտք է հանդիստ նստած լինի, երեխին վերցնի իր ծնկան վրայ և վորը ինչ թեքւի դէպի երեխի բերանը—այս դիրքով սրան յարմար կըլինի ծծելը։

Կշտացած երեխին հարկաւոր չէ սաստիկ օրօրել կամ վեր-վեր անել, քանի որ դրանից կերակուրը կարող է յետ գալ։ Չի կարելի քնած երեխին պահել ծծի վրայ, նոյնպէս մայրը չպէտք է քնի երեխին կերակրելիս։

Մայրն իր ստինքը (ծծերը) պէտք է շատ մաքուր պահէ. ամեն ծիծ տալուց առաջ խոտակ տաք ջրով լանայ և կերակրելուց յետոյ մաքուր կտորով սրբէ՝ պտուկները։ Կեղտոտ ծծերից երեխէն կըվնասուի (բերանումը դուրս կըգան բշտիկներ, փորը կըլուծէ) և մօր պտուկներն էլ կըճաքճաքեն,

որից կըհետևի սաստիկ պտկացաւ և յետոյ կարող է առաջ գալ ստինքների բորբոքումն։

Եթէ երեխէն լաւ չի ծծում, պէտք է իսկոյն նայել երեխի բերանը. եթէ որ բերանումը սպիտակ բշտիկներ են բուսնած կամ մի ուրիշ հիւանդութիւն է երևում, դեռ պէտք է հոգ տանել բժշկին ցոյց տալու, իսկ մինչև այդ կատարելը, պէտք է վերցնել փափուկ, բոլորովին մաքուր կտաւի կտոր, փաթաթել մի մատին (ճկըթին), թաց անել մաքուր ջրում կամ անշաքար չայում (թէյում) և էդ մատով սրբել երեխի ընտերքը, լեզուն և թշերի ներսի կողմերը։

Երբ մայրն իր կրծքով է կերակրում երեխին, պէտք է ինքն էլ լաւ սնունդ ունենայ. օգտակար է ուտել կաթ, ձու, միս, շիլախաւիծ։ Մայրը պէտք է հեռու մնայ էնպիսի կերակուրներից, որոնք սովորաբար նրան վնասում են և ստամոքսը խանգարում։

Ծիծ տուող մայրը բոլորովին չպէտք է գործ ածէ ոգելից խմիչք (գինի, արաղ), որովհետև դրանք բոլորն էլ վնասում են երեխին։

Մինչև վեց ամսական հասակը երեխին ոչ մի ուրիշ բան չի կարելի տալ, բացի մօր կաթից,—մինչև այդ ժամանակ նորածինը դեռ թոյլ է և ամեն ուրիշ կերակուր, մանաւանդ պինդ կերակրեղէն նրան անշուշտ կըվնասէ։ Վեց ամսից յետոյ, եթէ երեխէն առողջ է, կարելի է քիչ-քիչ տալ նրան կովի եփած կաթ, թերխաշ ձու, բրնձէ կաթնապուր կամ շիլա։

Երեխի կերակուրը պէտք է անպատճառ տաք լինի եւ ոչ սառը։ Պինդ կերակրեղէն, օրինակ՝ սեւ կամ սպիտակ հաց, բաքսմաթ, գետնախնձոր (կարտոֆիլ) կարելի է տալ, երբ երեխէն կոնենայ գոնեա ութը ատամ, այսինքն՝ մէկ տարեկան հասակում։ Գիշերները յիշածս կերակուրները տալը աւելորդ է։

Երեխին կարելի է ծծից կտրել, երբ երեխի մէկ տարին լրանայ։ Մի տարուց աւելի երեխին ծիծ տալու հարկ չկայ. էդ միջոցին մօր կաթն էլ առաջւայ պէս չի կշտացնում և օրէցօր պակասում է, մայրն էլ այժից ընկնում է և նուազում է (սըստանում է)։

Ծծից պէտք է կտրել կամաց-կամաց, այն է աւելի ուշ-ուշ ծիծ տալ և փոխարէնը ուրիշ կերակուրներ տալ։ Եթէ երեխէն հիւանդ է, մանաւանդ եթէ փորալուծ ունի, էդ ժամանակ չի կարելի մօր կաթից զրկել, շատ շոր ժամանակ ծծից կտրելը նոյնպէս վտանգաւոր է, որովհետև երեխին փորալուծ կըպատահի։ Երբ երեխին ծծից կտրեցիր, պէտք է նրան տալ նոյն կերակուրը, որ քիչ առաջ էլ տրւում էր. նախ ջրալի և ապա պինդ բաներ, ինչպէս՝ խաշած կարտոֆիլ, լաւ թխած տանու հաց, ձու։ Քաղցրեղէնից ամենից լաւն է շաքարը, որովհետև զանազան կանֆէտները, մանաւանդ ներկածները, շատ անգամ վտանգաւոր են։ Երրորդ տարումը երեխին կարելի է չափաւոր կերպով տալ էն բոլոր կերակուրները, որ մեծերն են ուտում սովորաբար։

Եթէ կաթնատու մայրը հիւանդ է, պէտք է անշուշտ բժշկի դիմէ, որ կարող է բացատրել թէ էդ հիւանդութիւնով կաթ տալը երեխին և իրան վնասակար չէ արդեօք։

Հա՜, ի՞նչ անել այն դէպքում, երբ բժիշկը չթոյլ տայ մօրը ծիծ տալ, երբ մօր կաթը ցամաքել է, կամ Տէրը մի արասցէ, մայրը վախճանւել է, թողնելով քաղցած ծծկերին։

Ամենից լաւը կըլինի գիմել մի առողջ կինարմատի՝ ծծերում կաթ ունեցողի, որ նա ծիծ տայ երեխին գոնեա այնքան ժամանակ, որ սա ամրանայ. պէտք է էնպիսի ծծմօր դիմել, որի երեխէն էլ նոյն հասակի լինի։ Էս բանը շատ կարևոր է մանաւանդ երեխի առաջի երեք ամիսներում։ Եթէ էդ էլ չյաջողւի, պէտք է ուրեմն երեխին կերակրել կովի կաթով։

Բայց՝ էդ բանի համար հետեւեալ զգուշութիւններն են հարկաւոր.—մի բաժակ կովի կաթին պէտք է խառնել եփ տուած ջուր և մի չայի գդալ շաքարի մանրունք։ Ջրի խառնուրդը պէտք է լինի այս հաշւով՝ մէկ շաբթական երեխի համար մի թաս կովի հում կաթին պէտք է աւելացնէք երեք թաս ջուր և եփ տաք։ Երկու և երեք շաբաթական երեխի համար պէտք է մի թաս (բաժակ) կաթին աւելացնել երկու թաս ջուր։ Չորս-հինգ-վեց շաբթական երեխին կարելի է տալ կովի կաթը կիսով չափ ջրախառն։ Եօթներորդ շաբաթից մին-

չի 3 ամսայ հասակը երկու թաս կովի կաթին պէտք է աւելացնել մի թաս ջուր։ Իսկ չորս ամսական երեխին կարելի է արդէն մնդել անխառն հում կաթով տաքացրած և քիչ շաքարով քաղցրացրած։

Պէտք է կաթ տուող կովի վրայ առանձին հոգացողութիւն. նրան պէտք է մաքուր պահել, բաւական խոտ տալ՝ չոր թէ կանաչ, խտակ ջուր խմացնել խառնուած թեփով և ալիւրով, քիչ էլ աղ աւելացրած։ Կովին չպէտք է տալ կեղտոտ ջուր, զանազան տանու մնացորդներով խառնուրդ բաներ։

Կովը կթելուց յետոյ (առաւօտ եւ երեկոյ) կաթը պէտք է լաւ եփել մինչեւ երեխին տալը պէտք է պահել (իստակ, մաքրուած եւ կրակի վրայ քոնած ամանով) սառը տեղում։ Երեխին պէտք է տալ կաթը միշտ տաքացրած և էնքան անգամ, որքան վերը յիշուած է մօր կաթի համար։ Էս կարգին պէտք է աւելի խիստ հետեւել, քանի որ շատից աւելի կովի կաթը աւելի ևս վնաս կըտայ, քան թէ մօր կաթը։

Պէտք է կաթը տալ երեխին էնքան, որ նա կուշտ լինի և գկռտալով յետ չբերէ աւելորդը։ Կովի կաթն ու ջրալի կերակուրը երեխին պէտք է տալ ապակէ ծծակով, որովհետև պողի (կոտոշի) և երկաթի կամ անագեայ ծծակները շուտ են կեղտոտուում։ Թէկուզ քիչ թթուած լինի կաթը, չպէտք

է տալ երեխին, որ դրանից կըսկսի փսխել և լուծմունք կըստանայ։ Արհեստական ծծակները ռետինից լինելու են։ Թէ այդ ծծակները և թէ կաթը շուշէն (ապակէ ամանը) պէտք է մաքուր լուանալ տաք ջրով ամեն կերակրելուց յետոյ։

Երբէք զործածելու չէ կեղծ ծծակ երեխի բերանը դնելու, որ պատրաստում են մայրերը ծամած հացից, տրորած գազարից կամ կաթնախաւիծից։ Ոչ մի օգուտ նրանցից չկայ, բայց վնասը շատ մեծ է. նրանցից երեխի բերանը բշբշտում է, լուծ և փորացաւ է առաջ գալի։ Երեխէքը լղարում են և թուլանում։ Ո՛չ մի դեղ էդ դէպքում երեխին չի օգնի, մինչև մայրը ձեռք չվերցնէ երեխի բերանը դնելու անպէտք սուտ—ծծակները։

Ինչ որ էստեղ գրուած է, պէտք է կատարել միշտ, մանաւանդ մեր պատուէրներին պէտք է խիստ հետեւել շոքերի ժամանակ, ամառուան եղանակին, երբ սովորաբար երեխէքն աւելի շատ են տկարանում և մեռնում լուծից։ Առհասարակ փորալուծի դէպքում, փոխանակ աւելորդ դեղեր երեխին տալու, լաւ է տանել նրան հէնց սկզբից բժշկի մօտ, ուր որ կայ։

Քանի այդ շուտ կատարւի, էնքան աւելի լաւ կըլինի։

Այս թերթիկը կարդացողներից ով կամենայ աւելի մանրամասն ծանօթանալ ծծկեր երեխաների

խնամատարութեան գործին, և ով ռուսերէն գիտէ, նա կարող է գիմել հետևեալ գրքոյկներին. Д-ръ **Е. А. Покровскаго:** „Объ уходѣ за малыми дѣтьми“, գինը 6 կոպ. և **Н. Ф. Михайловъ** „Совѣты матерьямъ“ գինը $1^1/_2$ կոպ. *):

*) Իսկ ով ռուսերէն չգիտէ, նա կարող է ձեռք բերել գոկտ. Վ. Արծրունու շատ օգտաւէտ գրքոյկը՝ «Խնամատարութիւն առողջ երեխաների ծննդեան րոպէից սկսած մինչև 3 տարեկ. հասակը», հրատ. Թ. Հ. հրատար. Ընկ. 1899, գինը 25 կ.

Ծանօթ. Թարգմ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0267739

6913

1

616·9
h-61